

Պատասխան- ՀՀ սահմանամերձ բնակավայրերի՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքների համար հողի հարկ վճարողներն ազատվում են 1994 թ. և հետագա տարիների համար հաշվարկված հողի հարկից և սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով հաշվարկված տույժերից: Արտոնություն ստացող բնակավայրերի ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը, իսկ չօգտագործվող հողատարածքներինը՝ մարզպետը:

ՀՀ սահմանամերձ համայնքների հողօգտագործողների հողի հարկը (մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքների համար) 2013 թ-ից պետությունը վճարում է ամբողջությամբ, իսկ ջրօգտագործողների ջրի վարձավճարը՝ 50%-ով: Համայնքների ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը: